ՍՈՑԻԱԼԻՍՏ-ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԱՇԱՏ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ (1903—1920 ԹԹ.)

Ս. Հ. ՄԵԼՔՅԱՆ

Քաղաքական կուսակցությունների պատմության քննությունը պատմագիտության կարևորագույն հիմնահարցերից է։ Գիտական և պրակտիկ առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում հատկապես ամենաղանդվածային՝ մանրբուրժուական սոցիալիստ-հեղափոխականների (էսէռների) կուսակցության գործունեության ուսումնասիրությունը։

Անդրկովկասում սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության գործունեությունը սկսվել է 1900—1902 թթ.՝ երկրամասի համեմատաբար խոշոր քաղաքներում, մասնավորապես Բաքվում և Թիֆլիսում[1]։ Սակայն այդ տարիներին նրանց կազմակերպված գործունեության մասին խոսելը սխալ կլինի, քանի որ սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության պատկանող անհատ պրոպագանդիստ գործիչների աշխատանքը ցանկալի արդյունք չուներ և ընթանում էր փոփոխական, կարճատև հաջողություններով։

Էսէռական առաջին կազմակերպված խմբակները Անդրկովկասում սկսեցին գործել միայն 1903 թվականից[2]։ Սկզբնական շրջանում էսէռների հարաբերական թուլության կարևոր պատճառներից մեկն այն էր, որ Անդրկովկասում անցյալ դարի վերջերին և XX դ. սկզբին հանդես եկան կուսակցություններ, որոնք թեպետև հիմնականում ազգային ուղղվածություն ունեին, բայց միաժամանակ իրենց վրա էին վերցրել Ռուսաստանում գործող էսէռական կուսակցության ֆունկցիաները[3]։

Դրան զուգահեռ պետք է ընդգծել նաև այն, որ եթե, մի կողմից, նշված կուսակցությունների գոյությունն արգելակում էր էսէռների գործունեության ընդլայնմանն ու խորացմանը, ապա, մյուս կողմից, այդ կուսակցությունները, մինչև էսէռների Անդրկովկասում հայտնվելը, բավականին աշխատանք էին տարել բանվորների ու գյուղացիների զգալի մասին իրենց շուրջը համախմբելու համար։ Դա նկատի ունենալով, սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության կենտկոմի անդրկովկասյան լիազորը կենտկոմին ուղղված հաշվետվության մեջ նշում է. «Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության աշխատանքը Անդրկովկասում, ինչպես հայտնի է, մասսաների մեջ սկսվել է ավելի ուշ, քան սոցիալ-դեմոկրատներինը։ Բաքվի, Թիֆլիսի, Բաթումի բանվորների մեծ մասն ընդգրկված էր սոցիալ-դեմոկրատական շարժման մեջ։ Կովկասում տարվող մեր աշխատանքում մեզ մեծապես օգնել են հայկական Դաշնակցությունն և վրացական սոցիալիստ-ֆեդերալիստների կուսակցությունները։ Առաջինը նրանով, որ ետ է պահել հայ աշխատավորությանը սոցիալ-դեմոկրատիայի ազդեցությունից, իսկ երկրորդը միավորել է վրացական սոցիալիստ-հեղափոխական մտավորականությանը և կարողացել է վրացերեն լեզվով ստեղծել մեծաքանակ էսէռական գրականություն»[4]։

Անդրկովկասի էսէռական կազմակերպությունների գործունեության մասին զգալի տեղեկություններ են պարունակում ժանդարմական վարչության

---

[1] Партийные известия, 5. V. 1907.

[2] А. И. Спиридович. Партия социалистов-революционеров и ее предшественники. 1886—1916, Пгр., 1918, с. 93.

[3] *Նկատի ունենք ՀՀ Դաշնակցությանը, վրաց ֆեդերալիստներին և մենշևիկներին։*

[4] Партийные известия, 5. V. 1907.

արձանագրությունները։ Ինչպես էսէռական կազմակերպությունների խիստ գաղտնապահությանը, երբեմն նրանց շարքերն էին թափանցում ժանդարմերիայի լրտեսներ, որոնք և մեծ դեր էին խաղում կազմակերպությունների հայտնաբերման և կազմակերպվող գործողությունների, հատկապես տեռորիստական ակտերի ձախողման գործում։

1903 թ., բացի Թիֆլիսից և Բաքվից, էսէռական խմբակներ էին գործում նաև Կարսում, Ալեքսանդրապոլում, Քութայիսում, Սուխումում, Երևանում և այլուր, սակայն նրանք փոքրաթիվ էին, և նրանց գործունեությունը սահմանափակվում էր միայն նեղ խմբակի շրջանակներում։ 1903—1905 թթ. ընկած ժամանակահատվածում էսէռների գործունեության հիմնական նպատակն ուղղված էր այն բանին, որպեսզի «նվաճեն Կովկասը» արգեն կազմակերպված սոցիալ-դեմոկրատիայից։ Այդ նպատակի իրագործման ճանապարհին էսէռները ձգտում էին միասնական բլոկ ստեղծել հայկական Դաշնակցության և վրացական սոցիալիստ-ֆեդերալիստների հետ։

«Կովկասի նվաճումը» հեղափոխական սոցիալիզմի համար,—գրում է կենտրոնական «Պարտիյնիե իզվեստիա» թերթը,—դարձել է կուսակցության և նրա դաղափարախոսների խնդիրներից մեկը, որոնք, իհարկե, չէին կարող չասկանալ Կովկասում՝ մարտերում կոփված, խիզախ, միլիոնանոց բանակի ստեղծման ռազմավարական խոշոր նշանակությունը»[5]։ Այդ նպատակով սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության կենտկոմը ժամանակ առ ժամանակ Կովկաս էր ուղարկում հատուկ լիազորներ, որոնց անմիջական նպատակը տեղում կուսակցական կազմակերպություններ ստեղծելը և միաբերելն էր։ Ցարական պահնորդական բաժանմունքը հայտնում էր, որ 1904 թ. սեպտեմբերին արտասահմանից, որպես էսէռների կուսակցության արտասահմանյան կոմիտեի լիազոր, Կովկաս է ժամանել հայտնի տարագիր Վլադիմիր Վոլսկին, որի նպատակն է «Կովկասում բարձրացնել սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության դրոշը»։ Նա նպատակ ուներ նաև «միաձուլել էսէռական կուսակցությունը, տեղի ազգային հեղափոխական կազմակերպությունները և հայկական դրոշակիստներին (Դաշնակցությանը—Ս. Մ.)»[6]։ Նույն նպատակով 1904 թ. Պետերբուրգից Թիֆլիս է ժամանում սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության կենտկոմի անդամ, հայտնի Մինները։ 1904 թ. էսէռական կազմակերպություններ են ստեղծվում Շուշիում և Ջիաթուրիում։ Փետրվարին Շուշիի ռեալական ուսումնարանի բարձր դասարանցի աշակերտները կազմակերպում են էսէռական խմբակ և հեկտոգրաֆով բազմացնում են թռուցիկներ։

Ցարիզմի քաղաքականությունն Անդրկովկասում 1900—1905 թթ. աչքի էր ընկնում մի շարք հետադիմական միջոցառումների իրագործմամբ։ Էսէռները և մյուս՝ հատկապես ազգային, կուսակցություններն ամեն կերպ աշխատում էին օգտագործել առիթը՝ իրենց քաղաքականության հիմնավորման և ժողովրդի աչքում հեղինակություն ձեռք բերելու նպատակով։ 1903 թ. հունիսի 12-ին Նիկոլայ II-ը հաստատում է հայ եկեղեցապատկան հողերը և գույքը բռնագրավելու վերաբերյալ օրենքը, որը ոտնահարում էր ոչ միայն հայերի կրոնական զգացմունքները, այլև հայ ժողովրդի քաղաքական ու մշակութային շահերը։ Օգտագործելով հարմար առիթը, ծավալված համաժողովրդական շարժումը, հայ ժողովրդի արդարացի զայրույթը ցարիզմի բռնությունային քաղաքականության դեմ, դաշնակցական և հնչակյան կոմիտեները, ժողովրդական զանգվածներին պայքարի մղելուց բացի, դիմեցին նաև ահաբեկչական գործողությունների։ Անդրկովկասի էսէռական կազմակերպությունները իրենց համերաշխությունը հայտնելով հայկական կուսակցությունների

---

5 Նույն տեղում։

6 Վոստանի Հանրապետության պատմության կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՎՀ ՊԿՊԱ), ֆ. 12, ց. 13, գ. 655, թ. 6։

ահաբեկման քաղաքականությանը, օգտագործելին պատեհ առիթը նաև իրենց դաղափարների և տակտիկայի պրոպագանդման համար։ Այս կապակցությամբ Բաքվի սոցիալիստ-հեղափոխականների կազմակերպությունը 1903 թ. նոյեմբերի 1-ին տարածեց մի թռուցիկ, որտեղ ասվում էր. «Մենք՝ ռուս, վրացի և մյուս ազգություններին պատկանող բանվորներս, պետք է օժանդակենք հայ ընկերներին նրանց համար ստեղծված պայքարի այս ծանր միջոցին, մեր ընդհանուր թշնամու՝ ինքնակալության դեմ»[7]։

1905 թ. փետրվարին Անդրկովկասում գործող Բաքվի, Թիֆլիսի, Քութայիսի և Բաթումի էսէռական կոմիտեները միավորվեցին, ստեղծելով սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության Կովկասյան միությունը[8] իրեն եռթակա մարտական դրուժինաներով, որոնց անմիջական նպատակը ահաբեկչական ակտերի իրագործումն էր։

1905 թ. ընթացքում բավականին աշխուժացում է նկատվում Անդրկովկասի այլ հայաշատ քաղաքներում գործող էսէռական կազմակերպությունների կյանքում։ 1905 թ. սկսում է գործել Երևանի էսէռական կազմակերպությունը։ Այդ մասին հիշատակվում է 1917 թ. ապրիլին Թիֆլիսում կայացած Սոցիալիստ-հեղափոխականների անդրկովկասյան մարզային համագումարում Երևանի կազմակերպության ներկայացուցիչ Տեր-Հակոբյանի ելույթում. նրանում ասված է. «էսէռական կազմակերպության գործունեության սկիզբը վերաբերում է 1905 թ., երբ «Դաշնակցություն» կուսակցությունից ղժգոհ հեղափոխական-սոցիալիստական տարրերը հեռացան այդ կուսակցությունից և մի քանի էսէռ ուսանողների հետ հիմնեցին իրենց կազմակերպությունը»[9]։

1905 թ. հաջողվում է էսէռական կազմակերպություն ստեղծել Ելիզավետպոլում։ 1905—1907 թթ. ընթացքում Անդրկովկասում կազմակերպվում են հայկական, վրացական, հունական, օսեթական, ադրբեջանական և այլ ազգային էսէռական կազմակերպություններ, որոնք իրենց մասնաճյուղերն են ստեղծում Բաքվում, Թիֆլիսում, Երևանում, Քութայիսում, Կարսում, Ելիզավետպոլում, Ալեքսանդրապոլում, Շուշիում, Բաթումում և երկրամասի այլ քաղաքներում։

1907 թ. օգոստոսի 16—20-ը Թիֆլիսում տեղի ունեցած Անդրկովկասի սոցիալիստ-հեղափոխականների մարզային համագումարի տվյալներով, ըստ ազգային պատկանելության, առաջին տեղում էին միացյալ, գլխավորապես ռուսական (մոտ 2500 անդամներ), այնուհետև հայկական (մոտ 1200 անդամներ), ապա մյուս ազգային կազմակերպությունները՝ վրացական, օսեթական, հունական, ադրբեջանական (միասին մոտ 500 անդամ)։

Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության անդամների թիվը Անդրկովկասում 1907 թ. հասնում էր 4000-ի[10]։

1907 թ. Անդրկովկասի էսէռականության կյանքում տեղի ունեցած կարևոր իրադարձություններից մեկը սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության հայ կազմակերպության ստեղծումն էր, որի նախաձեռնությունն իրենց ձեռքն էին վերցրել այսպես կոչված «անջատականները» կամ «երիտասարդ դաշնակցականները», որոնք Լևոն Աթաբեկյանի (Ռիխարդ) և Արսեն Ամիրյանի գլխավորությամբ 1906 թ. հեռացել էին «դաշնակցություն» կազմակերպությունից[11]։ Սակայն «երիտասարդ դաշնակցականների» նպատակը, ոչ թե «դաշնակցության» մերժումն էր, այլ նրա «բարեհորոգումը» էսէռական երանգներով, այդ կուսակցության գործունեության հարմարեցումը կովկասահայ ռեալ իրականությանը և տվյալ ժամանակաշրջանի պահանջներին։ Առաջադրվում էին ավելի ձախ ծրագիր և ճկուն տակտիկա։

---

7 Революционная Россия, 1. XI. 1903.

8 ՎՀ ՊԿՊԱ, ֆ. 83 ս, ց. 1, դ. 37, թ. 11։

9 Знамя труда, Тбилиси, 11. IV. 1917.

10 Նույն տեղում, 12. IX. 1907։

11 Միքայել Վարդանյան, Հ.Յ. Դաշնակցության պատմություն, հ. Բ, Թեհրան, 1981, էջ 162։

Այսպիսով, 1907 թ. հունիսին Բաքվում ձևավորվեց Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության հայ կազմակերպությունը՝ ռուսական սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության հայկական մասնաճյուղը։ Բաքվի էսէռների հայ կազմակերպությունը 1907 թ. իր շարքերում ընդգրկում էր 670 անդամ, իսկ Թիֆլիսինը՝ 200[12]։ Ընդհանրապես Անդրկովկասում գործող բոլոր հայկական էսէռական կազմակերպությունները միասին իրենց շարքերում ընդգրկում էին 1200 անդամ։

Հայ էսէռական կազմակերպությունում, բայի Լևոն Աթաբեկյանից, ակտիվ դեր էին կատարում Վ. Միհախորյանը, Վ. Խորխորունին, Գ. Մելիք-Շահնազարյանը, Գ. Բաղազ-Աղաջանյանը, Բյուզանդը և ուրիշներ։ 1903 թ. մարտից Բաքվում սկսում է լույս տեսնել էսէռների հայ կազմակերպության «Անիվ» շաբաթաթերթը, որի խմբագիրը Գրիգոր Բաղազ-Աղաջանյանն էր[13]։

Էսէռների գործունեությունը 1910—1914 թթ. սահմանափակվում էր գաղտնի հավաքների կազմակերպմամբ, թռուցիկների և կոչերի հրատարակմամբ։ Ոստիկանության հետապնդումների հետևանքով հայտնաբերվում են շազմաթիվ կազմակերպություններ, իսկ Բաքվում 1910 թ. ապրիլին բռնագրավվում է էսէռների տպարանը։ «1910 թ. կեսերին, ոստիկանության հետապնդումների հետևանքով. կազմակերպությունը մնաց առանց մտավորականության ներկայացուցիչների, առանց տպարանի, առանց որևէ կապերի և փողի...»[14]։ Ինչպես հաղորդում էր Բաքվի ոստիկանությունը Կովկասի փոխարքային ուղղված զեկուցագրում, Բաքվի կազմակերպության կենտրոնը 1911 թ. Մարիա Սունդուկյանցի «Սոտրուդնիկ» դրախանութն էր, որտեղ հավաքվում էր կազմակերպության ղեկավար կազմը[15]։

Առաջին աշխարհամարտի տարիներին էսէռների դիրքերն Անդրկովկասում բավականին թուլացան։ Նոր պայմաններում նրանց կազմակերպություններից մի քանիսը չդիմացան և ջախջախվեցին։ Անդրկովկասի էսէռական բազմաթիվ գործիչներ ձերբակալվեցին և աքսորվեցին Ռուսաստանի հեռավոր շրջանները։ Նրանց մի մասը բռնեց արտագաղթի ուղին։ Օրինակ, Վ. Լունկևիչը (Վ. Արարատսկի), արտասահման գնալով, սկսեց աշխատակցել Փարիզում լույս տեսնող «Օտկլիկի ժիզնի» էսէռական թերթին[16]։ Հատուկենտ էսէռական կազմակերպություններ պահպանվեցին Բաքվում, Թիֆլիսում, Ելիզավետպոլում, Նախիջևանում, Կարսում և այլ քաղաքներում։

Անդրկովկասում սոցիալիստ-հեղափոխականների կուսակցությունն «իր երկրորդ ծնունդն» ապրեց 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ նրա պատմության մեջ սկսվեց, ինչպես իրենք՝ էսէռներն էին գրում, աննախադեպ և «փառավոր» մի շրջան։

Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցությունը 1917 թ. դարձավ Ռուսաստանի զանգվածային կուսակցություններից մեկը։ Էսէռները սկսեցին ակտիվորեն մասնակցել երկրամասի քաղաքական կյանքին, հատկապես, երբ մեծամասնություն ստացան նոր ձևավորվող բանվորների, զինվորների և գյուղացիների պատգամավորների խորհուրդներում ու քաղաքային ինքնավարության մարմիններում։ Երկրամասում էսէռների ազդեցության փաստերից են, օրինակ, այն, որ ինչպես նշում է Ա. Մռավյանը, Կարսի քաղաքագլուխ է ընտրվում սոցիալիստ-հեղափոխական Տեր-Ներսիսյանը կամ Թիֆլիսի ու Գանձակի քաղաքագլխի օգնականներ են ընտրվում դարձյալ սոցիալիստ-հեղափոխականներ[17]։

---

12 Знамя труда, Тбилиси, 12. IX. 1907.

13 Անիվ, 8. VI. 1908։

14 Знамя труда, Париж, 1912, сентябрь.

15 Ադրբեջանի Հանրապետության պատմության կենտրոնական պետական արխիվ, ֆ. 46, ց. 3, գ. 178, թ. 14։

16 Отклики жизни, Париж, 1916.

17 Ա ս ք ա ն ա զ Մ ռ ա վ յ ա ն, Հոդվածներ և ճառեր (1913—1929), Երևան, 1961, էջ 121։

Ստանալով լեգալ աշխատանքի լայն հնարավորություններ՝ Անդրկովկասի էսէռները ձեռնամուխ եղան տեղական նոր կազմակերպությունների ստեղծմանը, ներկուսակցական կյանքի վերակառուցմանը։ 1917 թ. ապրիլի 2-ից սկսեց լույս տեսնել սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության Թիֆլիսի կազմակերպության կոմիտեի օրգան «Զնամյա տրուդա» թերթը։

1917 թ. ապրիլի 7-ին Թիֆլիսի հայկական Գայանյան դպրոցի շենքում իր աշխատանքներն է սկսում սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության մարզային համագումարը[18]։ Կազմակերպչական հանձնաժողովի՝ այդ օրերին հրատարակած հաշվետվությունից տեղեկանում ենք, որ էսէռական կուսակցության կոմիտեներ էին գործում Բաքվում, Թիֆլիսում, Ելիզավետպոլում, Երևանում, Կարսում, Սարիղամիշում, Տրապիզոնում, Քութայիսում, Ալեքսանդրապոլում, Վանում և այլն։ Էսէռական խմբակներ էին գործում Շուշիում, Գորիում, Փոթիում, Էրզրումում և այլ քաղաքներում։

Հոկտեմբերյան հեղաշրջման լուրը խուճապ առաջացրեց նաև Անդրկովկասի էսէռականության շարքերում։ Նրանք այլևս չէին ցանկանում թաքցնել իրենց բացասական վերաբերմունքը բոլշևիկյան կուսակցության նկատմամբ. «Մենք միշտ բացասական վերաբերմունք ենք ունեցել բոլշևիզմի նկատմամբ,—արդեն առանց թաքցնելու գրում էր «Զնամյա տրուդան»։ Եվ մեր դիրքորոշումն այդ հարցում ճիշտ է եղել՝ արդարացվել է կյանքով»[19]։

Ելնելով իրենց ծրագրային այն դրույթից, որ Ռուսաստանը սոցիալիստական հեղափոխությանը կմոտենա, սակայն ոչ միանդամից, այլ երկար տարիներ անց, էսէռները Հոկտեմբերյան հեղաշրջումը որակեցին որպես «հակահեղափոխական ակտ»։ «Ռուսական հեղափոխական դեմոկրատիայի համար մի հանգամանք պարզ է եղել միշտ,—գրում էր «Աշխատանքի դրոշակը»,—և այժմ էլ պարզ է, որ ռուսական այժմյան հեղափոխությունը սոցիալիստական չէ, որ խոսք չի կարող լինել սոցիալիստական հեղափոխության մասին մի երկրում, ուր 80 %-ը անգրագետ են և քաղաքացիորեն անպատրաստ»[20]։

Բաքվի էսէռական աշքի ընկնող գործիչներից մեկը՝ Սաքո Սահակյանը, չթաքցնելով իր ատելությունը բոլշևիկյան կուսակցության հանդեպ, նշում էր, որ «բոլշևիկների արկածախնդրական մարտավարությունը ոչ պրոլետարական և ոչ էլ դեմոկրատական է»։ Բոլշևիկներին նա որակում էր որպես «դավադիրներ», որոնք հենվում են «ոչ թե պրոլետարիատի, այլ թիկունքի բարոյազուրկ ուժերի վրա»[21]։

Երկրում տեղի ունեցող լուրջ քաղաքական իրադարձություններն իրենց խոր կնիքը դրեցին նաև էսէռական կուսակցության գործունեության վրա։ 1918 թ. առաջին ամիսներին ավելի խորացավ սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության ներքին ճգնաժամը։ Աջ էսէռների հեղինակությունը երկրամասում գրեթե ամբողջովին ընկել էր։ Ձախ էսէռները, որոնց դիրքերը զգալիորեն ամրապնդվել էին Անդրկովկասում, հանդես էին գալիս արմատապես տարբերվող հարցադրումներով։ Ձախ էսէռների Բաքվի կազմակերպության ղեկավարներից մեկը՝ Ի. Սուխարցևը, «Իզվեստիա» թերթում հրատարակած «Մեծ պատակտում» հոդվածում գրում էր. «Պառակտումը հասավ և Բաքու։ Բաքվի, ինչպես նաև մյուս արդյունաբերական շրջանների ձախ էսէռական կազմակերպությունն իր գործունեությունը նոր է սկսել։ Բայց այն արդեն ուժ ունի, Բաքվի պրոլետարիատի հսկայական մասը դնում է նրա ետևից»[22]։ Բաքվի նորընտիր խորհրդում ձախ էսէռների թիվը հասնում էր 38-ի (բոլշևիկներինը՝ 51-ի, աջ էսէռներինը՝ 21-ի, մենշևիկներինը՝ 11-ի)[23]։

---

18 Знамя труда, Тбилиси, 9. IV. 1917.

19 Նույն տեղում, 19. XI. 1917։

20 Աշխատանքի դրոշակ, 5. XI. 1917։

21 Знамя труда, Тбилиси, 29. XI. 1917.

22 Известия бакинского совета, 4. I. 1918.

23 Աշխատանքի դրոշակ, 5. V. 1918։

Զախէսէական կազմակերպություններ էին ստեղծվում նաև Թիֆլիսում, Բաթումում, Կարսում, Ալեքսանդրապոլում և այլ քաղաքներում։ 1918 թ. սկզբներին իր գործունեությունն է ակտիվացնում էսէռների կուսակցության հայ կազմակերպությունը։

Հունվարի 18-ին Թիֆլիսի III արական գիմնազիայի շենքում իր աշխատանքներն է սկսում հայկական կազմակերպությունների ներկայացուցիչների համագումարը[24]։

1918 թ. ապրիլի 9 (22)-ին Անդրկովկասյան սեյմը երկրամասը հռչակեց «անկախ» «դեմոկրատական ֆեդերատիվ հանրապետություն»[25]։ Էսէռները, նկատի ունենալով Անդրկովկասի ազգաբնակչության մեծամասնության հակաթուրքական տրամադրությունները, դեմ արտահայտվեցին Անդրկովկասի անկախությանը։ Լ. Թումանյանը, հանդես գալով էսէական կուսակցության անունից, նշեց, որ Անդրկովկասի ժողովուրդները երբեք չեն մտածել անջատվել Ռուսաստանից, որ «անկախության» հռչակումը բխում է «թուրք իմպերիալիստների» շահերից։

1919 թ. օգոստոսի 1-ին բացվում է Հայաստանի Հանրապետության խորհրդարանը։ «Մյուս քաղաքական կուսակցություններից,—գրում էր Հովհ. Քաջազնունին,—ներկա էր միայն սոցիալիստ-հեղափոխականը, որը գրավել էր ընդամենը չորս տեղ»[26]։ Հայաստանի խորհրդարանի էսէական ֆրակցիայի անդամներն էին Ա. Խոնդկարյանը (նախագահ), Լ. Թումանյանը, Ս. Զուբյանը և Վ. Մինախորյանը[27]։

Հայաստանում 1918—1920 թթ. ընկած ժամանակահատվածում համեմատաբար խոշոր էսէական կազմակերպություններ էին գործում Երևանում, Ալեքսանդրապոլում և Դիլիջանում։ Նշված ժամանակաշրջանում էսէական կազմակերպությունների և էսէական խորհրդարանական խմբակցության գործունեության վերաբերյալ Ա. Մռավյանը գրում էր. «Սոցիալիստ-հեղափոխականների տակտիկան Հայաստանում այդ շատ հետաքրքիր խնդիր է, բայց նա բարդ չէ։ Այդ տակտիկան եղել է լեգալ, օպոզիցիոն կազմակերպության տակտիկան, որը պայմանավորվում է այդ կուսակցության ունեցած սոցիալ-քաղաքական կշռով երեքի կյանքում։ ...Ճնշող դաշնակցական մեծամասնություն ունեցող Հայաստանի խորհուրդը, ապա պառլամենտ առանց մեծ վրդովմունքի ուանում էին էսէական օպոզիցիայի ասեղային հարվածները, հարվածներ, որ երբեք չէին սպառնում դաշնակցականների քաղաքական գերիշխանությանը»[28]։ Այդ նկատի ուներ նաև Հովհ. Քաջազնունին, երբ գրում էր. «Չէինք հասկանում, որ մեր սեփական դաստիարակության համար մեծ կարիք ունեինք, որ մի զորեղ օպոզիցիա կանգնած լիներ մեր կողքին, միշտ զգաստ պահեր մեզ, ի կարգ հրավիրեր և թույլ չտար, որ դուրս գայինք օրենքի ու իրավասության սահմաններից»[29]։

Խորհրդարանի էսէական խմբակցությունը իրեն ակտիվորեն դրսևորեր հատկապես 1921 թ. փետրվարյան ապստամբության ժամանակ։ «Հայրենիքի փրկության կոմիտեի» մեջ որպես խնամատարության և արդարադատության գործերի վարիչներ նշանակվեցին էսէռներ Վահան Մինախորյանը և Արշամ Խոնդկարյանը։

Փետրվարյան ապստամբության ճնշումից հետո նրանք հեռացան արտասահման։ Շարքային շատ էսէռներ կամ մտան բոլշևիկյան կուսակցության շարքերը, կամ պարտավորվեցին օրինապահ դիրք գրավել խորհրդային

---

24 Знамя труда, Тбилиси, 7. IV. 1918.

25 Նույն տեղում։

26 Հովհ. Քաջազնունի, Հ. Ց. Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Վիեննա, 1923, էջ 37—38։

27 Սոցիալիստ-հեղափոխական, 11. IV. 1920։

28 Ասքանազ Մռավյան, նշվ. աշխ., էջ 137—138։

29 Հովհ. Քաջազնունի, նշվ. աշխ., էջ 38։

կարգերի նկատմամբ։ Շատերն իրենց կյանքի մի մասը անցկացրեցին բանտերում և աքսորներում, իսկ ովքեր մնացել էին հայրենիքում, տանջամահ արվեցին ստալինյան աքսորավայրերում։

Այսպես՝ անփառունակ, պատմության ասպարեզից հեռացավ մի կուսակցություն, որը մարտնչեց ցարիզմի տապալման համար, ուներ սոցիալիզմի կառուցման իր ծրագիրը, որը սակայն, չիրագործվեց, բոլշևիկյան կուսակցության վարած քաղաքականության՝ միակուսակցական կառավարման համակարգի ոչ դեմոկրատական պայմաններում։

СОЦИАЛИСТЫ-РЕВОЛЮЦИОНЕРЫ В АРМЕНИИ И АРМЯНОНАСЕЛЕННЫХ ГОРОДАХ ЗАКАВКАЗЬЯ (1903—1920 гг.)

С. Г. МЕЛИКЯН

Резюме

Первые эсеровские организации в Закавказье появились в 1903—1905 гг. в Тифлисе, Ереване, Баку и других городах края.

Эсеровская партия не жалела сил для создания своих организаций среди многонационального населения Закавказья. В период 1905—1907 гг. в Закавказье формируются армянские, грузинские, греческие, осетинские, азербайджанские и другие национальные эсеровские организации, которые создают свои филиалы в Тифлисе, Баку, Ереване, Кутаиси, Карсе, Александрополе, Шуше, Батуми и других городах края.

«Второе рождение» партии эсеров относится к периоду после Февральской революции 1917 г.